

Մարտ 20, 1958

Հոգեշնորհ  
Տ. Վաչէ Արղ. Յովսէփեան,  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Խաչ Հայր. Եկեղեցւոյ,  
Եռնիքն Սիթի - Ն.Ճ.

Սիրելի Հայր Վաչէ.

Ստացած ենք ամսոյս 14 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէիք թէ ձեր նախագահութեան տակ գումարուած Միական Ժողովիդ մէջ ընտրած էք Միական Խորհուրդիդ անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացումը:

Նկատի ունենալով որ ներքոյի շեշտ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ պարտաճանաչ անդամներ եկեղեցւոյդ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ հետեւեալին.-

- Պրնք. Գառնիկ Ներսէսեան
- Տիրան Զօփուրեան
- Հէրըտ Ազմէլեան
- Հէրրի Սապոնեան
- Գառնիկ Ենչուկեան
- Հէրրի Պէնտեան
- Նշան Սթամպուլեան

Կը սպասենք շուտով ձեր վերջացող տարուայ նիւթաբարոյական մանրամասն տեղեկագրին, ինչպէս նաեւ ներկայ շրջանիս Միական Խորհուրդիդ Գիւանին եւ անդամոց ցանկին հետ իւրաքանչիւրին հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Կը մաղթենք ձեզ եւ Պատուարժան Միական Խորհուրդիդ բոլոր անդամներուն համախոհ եւ բեղմնաւոր զործունէութիւն յօգուտ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան եւ կաղօթենք ամէնքիդ առողջութեան եւ բարօրութեան համար:

Հայրական Սիրոյ Ողջունիւ,

Աղօթարար՝

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՅԱՅԵԱՆ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի